

Ս. ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄ




«Ձի ոչ գոյր նոցա տեղի իջեանի»:

Դարձեալ կանգնած Աստուածորդոյն Մտորին առնթեր, ուր դարեր առաջ տեղի ունեցաւ Մարդուն փրկագործութեան Մեծ և Սքանչելի Խորհուրդը, կու գամ փոխանցել քեզի սիրեցեալ ժողովուրդ Հայոց, որ ի Սուրբ Երկիր, ի Յորդանան, ի Սուրիա, ի Լիբանան, ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի, ողջոյն սիրոյ, օրհնութեան և խաղաղութեան:

Հազարաւոր տարիներ առաջ, Ծննդեան այս խորհրդաւոր գիշերուան մէջ երկնքի դռները կը բացուէին նման Աստուծոյ շրթներուն և Բանը կը մարմնանար: Աստուածայայտնութեան տօնը այս գիշեր դարձեալ կը հաւաքէ մարդոց միտքերը իր «Մեծ և սքանչելի խորհուրդին» շուրջ, անոնց աչքերուն առաջ բանալու համար աստուածային Բանին, Խօսքին հրաշքը, որ այս երեկոյ կու գայ բնակիլ մեր մէջ: Աստուածորդոյն ծնունդով կատարուած Յայտնութիւնը, կու գար հիմնովին փոխելու Մարդուն՝ Աստուծոյ մասին ունեցած ըմբռնումը, գայն աւելի բարձրացնելով ու խորացնելով աւելի կը մօտեցնէր մարդկութեան սրտին: Ու այդ լո՛ւր ու սո՛ւր գիշերէն սկսեալ հաւատացեալը Քրիստոսին մէջ տեսաւ գորովագութ Հայր մը, ազատարար Փրկիչ մը, իր նման կնոջմէ ծնած եղբայր մը, և մարդուն խոնարհած անվերապահ վստահութեան արժանի ոյժ մը:

Այս գիշեր ծնող Բանը, Խօսքը՝ մարդուն կը տրուէր իբր հոգեղէն էակի, որովհետեւ մարդը իր հոգեկան կազմութեամբ և աշխարհով Աստուծմէ տրուած գաղափար մըն է, որուն հոգւոյն ջերմ ծալքերուն մէջ երկնաբարձութիւն մը միշտ կ'եռեւեփի. անոր մէջ ինկած աստուածային ճառագայթը կայ, ու ատոր համար է որ Երկնաւորին խօսքը ուղղուած երկրաւորին՝ յայտնութիւն մըն էր: Հին Կտակարանի տեսանողներուն և մարգարէներուն համար եւս «Եւ եղեւ Բան Տեառն առ իս»ը աստուածային յայտնութիւններ էին, սակայն նոր կրօնքով յայտնուող Բանը՝ ինք էր, Աստուածորդին, որ կու գար մարմին առնելով բնակիլ մարդոց մէջ, անոնց հոգիին ու մտքին թափելով իր յափտեմական խորհուրդին լոյսը: Մակայն մարգարէներուն հետ խօսող և Աստուածորդոյն, Ապ-



րող Խօսքին միջեւ տարբերութիւն մը կար: Առաջինները արագ յայտնատեսութեան մը մէջ դէմ առ դէմ եկան Աստուծոյ, մինչ Քրիստոս՝ Աստուծոյ մարմնացած Խօսքը, իր մարմնով և անձով պիտի ապրէր այդ, որուն համար ալ պիտի ըսէր. «Ճանաչէ զիս Հայր, և ես ճանաչեմ զՀայր»:

Քրիստոսի մարդեղութեամբ տիեզերքը կու գար լեցուելու մինչ այդ հեթանոս աշխարհին ու մարդկութեան անձանօք նոր զգացումով մը, բարութեամբ և անհուն ու խոր սիրով մը: Տիեզերքը սիրտ մը կ'ունենար և կեանքը՝ իմաստ, երբ գիտենք թէ անոր սկիզբը և վերջը տիեզերական Հայր մը կայ, որ իր Միածին Չաւակը մարդոց մէջ կը դրկէր, որպէսզի անոնց տառապանքով արիւնէր և անով զիրենք իրեն ու երկնքի եղբայր ընէր: Քրիստոսով մարդկութեան ապականած հոգիներուն մէջ նոր շունչ մըն էր որ կը մտնէր, որ կու գար փոխելու մարդուն բնութիւնը, վերաբերումունքն ու յարաբերութիւնը իր Հօր՝ և Միակ Աստուծոյ հետ:

Մանուկը, որ կը ծնի մեր սիրտերուն մէջ այս գիշեր, մարմնացումն է սիրոյ և խաղաղութեան, խաղաղութիւնը՝ որ ամբողջ դարեր եղած է տառապող մարդկութեան միակ իղձն ու

տենչանքը: Սակայն այս օրերուն, խաղաղութեան աղերսը աւելնալով դարձած է միլիոններու ճիչ մը: Դժբախտաբար, հակառակ այս բոլորին տխուր է ըսել թէ պատերազմի և նախճիրի կիրքը տակաւին կ'եռենսփի կարգ մը անաստուած դեկավարներու և մարդոց միտքերուն ու սիրտերուն մէջ: Այս երկրագունդը ներկայիս, աւելի մեծ չափանիշերով կը կրկնէ այդ ողբերգութիւնը: Գեհեճնային ոյժեր միջամուխ կ'ըլլան աշխարհի և մարդկութեան արժէքներուն և ճակատագրին, զանգուածները վերածուած են անհատի և անոր լեզուն՝ զենքի: Իսկ անդին, ազգերու գերակայութեան և տիրապետելու վայրագ բնագոյր անասելի անգթութեանց կ'առաջնորդէ մարդը՝ մարդուն դէմ, և այս բոլորը՝ որովհետեւ մարդուն ողբերգութիւնը կը սկսի այն թուականէն, երբ Աստուած կը մեռնի իր մէջ և ան կը վերածուի խեղճերանքի ու կը դառնայ կեր՝ մահուան:

Կը գտնուինք անկման մէջ եղող աշխարհի մը վրայ, փեռնկտուած անբուժելի հակասութիւններով: Չկայ ոչ միայն ֆիզիքական ապահովութիւն, այլ նաեւ հոգեկան: Ներկայիս մարդկութիւնը կ'ապրի նախճիրի և ստուերներու աշխարհի մը մէջ, և Մարդը կ'անցնէ բարոյական հոգեվարք մը, նման հին օրերու աշխարհին, որուն կործանումին Աստուածորդին կու գար բերելու իր փրկութիւնը: Ան իր ծնունդով աշխարհին կը բերէր ոչ թէ բարոյական սիստեմ մը, այլ աւելի՝ կեանքի յղացք մը, որ անսպառ ու մշտաճառ աղբիւր մըն էր: Հակառակ անոր, որ Քրիստոնէական բարոյականի գետը ժամանակի ընթացքին շատ առուններ ընդունած է իր մէջ, սակայն անոր էութիւնը մնացած է հարազատ, մարդկային և բիրեղեայ, ուր միշտ կը ցոլայ Աստուծոյ պատկերը, հրաւիրելով Մարդը Իր նմանութեան:

Մարդակային պատմութեան քիչ թէ շատ ծանօթ եղողներ, լաւ գիտեն թէ ի՞նչ կացութեան մէջ կը գտնուէր մեր աշխարհը, երբ Աստուածայայտնութեան գիտաւորը կու գար լուսաւորելու Բեթղեհէմի երկնականարը: Հին աստուածները սնանկացած իրենց երբեմնի փառքէն, այլեւս դարձած էին մարդոց անտարբերութեան և ծաղր ու ծանակին նշանակ: Մարդկութեան բարոյականը ինկած էր և ընկերութեան հիմերը խախտած, և իր հրաշագործ յայտնութեամբ Քրիստոս կու գար փրկել կացութիւնը. Ան կու գար իր բարութեամբ և սիրով աշխարհին ցոյց տալու փրկութեան և

Մարդուն բարձրացման ճամբան:

Ներկայ աշխարհի դժուարութիւնը ոչ տնտեսական է և ոչ ալ քաղաքական, այլ միայն բարոյական: Մեր աշխարհը այս օրերուն կը տառապի հոգեւոր և բարոյական սնանկութենէ և ոչ մէկ քաղաքական կամ տնտեսական դրութիւն կրնայ յաւիտենապէս գոյատեւել եթէ հիմնովին բարոյական չէ: Հայր Աստուած ի՞նք է բացարձակը, ոչ մարդը, ոչ ցեղերը, ոչ ազգերը և ոչ նոյնիսկ քաղաքական կամ տնտեսական կառոյցները, այլ միայն Աստուած: Այնքան ատեն որ Մարդը կը հակառակի աստուածային օրէնքներու, Ան պիտի պատուհասէ զինք: Ոչ միայն թագաւորներ, այլ թագաւորութիւններ կու գան ու կ'երթան, ցեղեր ու ազգեր կ'ուծանան և տնտեսական ու քաղաքական կառոյցներ պիտի կործանին, մինչեւ Մարդը սորվի, թէ «Երկիւղ Տեսնոն սկիզբ է իմաստութեան»:

«Յնծութիւն աշխարհի ծնար» կ'երգէ սրբազան Հայ շարականագիրը, որովհետեւ «Բանը, Աստուծոյ Խօսքը» այս գիշեր կը ծնի ոչ միայն մեր մեղքերու քաւութեան, այլ որպէսզի աշխարհ ցնծար սիրով և խաղաղութեամբ, բան մը որ անգիր ժամանակներէ ի վեր եղած էր ամբողջ մարդկութեան երազը, տենչը, կարօտն ու հոգիին ու մտքին պապակը, բան մը՝ որ մեր Մեծ աղօթասացին՝ Նարեկացիի շրթներուն վերածուած էր աղերսի, որ «փարատին մէզն ու մառախուղը», չքանան չարիքն ու յուսահատութիւնը մարդոց սիրտերէն և հոն արձագանգէր հրեշտակներու աւետաւոր պատգամը. «Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն...Ձի ծնաւ մեզ այսօր Փրկիչ»:

Դարերով խաղաղութեան և սիրոյ կարօտը տառապող մարդկութեան մէջ վերածուած էր ուժգին աղաղակի, իսկ այդ ճիշը ներկայիս այլեւս վերածուած է միլիոններու հոգիէն բարձրացած պոռթկացող աղաղակի: Դարերով Հայ ժողովուրդը տենչաց և աղօթեց խաղաղութեան, ոչ միայն մեզի պարտադրուած քաղաքական պայմաններուն համար, այլ աւելի՝ որովհետեւ մենք խորապէս հաւատացինք թէ խաղաղութեան, սիրոյ և համագործակցութեան աշխարհի մը մէջ էր միայն, որ կարելի պիտի ըլլար Աստուծոյ Թագաւորութիւնը իրագործել: Անցաւ ամբողջ դար մը և ազգերու անտարբերութեան պատճառով Հայ ժողովուրդը չհաշտուեցաւ անհաշտելիին հետ: Մենք, որ դարերով եղած ենք զաւակները

անարշալոյս մնացած ժողովուրդի մը, և սակայն երբեք չենք ընկրկած այդ խաւարչտին օրերէն, տակաւին կը յամառինք հաւատալ խաղաղութեան, սիրոյ և կորսուած արդարութեան մը, որ պիտի ըլլայ այս գիշեր վերստին ծնող միակ և արդար հատուցումը մեր ազգին, որովհետեւ մեր ժողովուրդը իր ամբողջ պատմութեան ընթացքին ազատութեան տենչին չափ բռնութիւն և երկնքին չափ խորունկ խաղաղութեան իղձն ու ծարաւն է ունեցեր, պարզապէս, որովհետեւ համոզուած է թէ միայն Սէրն ու Խաղաղութիւնն են, որոնք կրնան իրապէս երջանկացնել մարդկութիւնը:

Երկու հազար տարիներ առաջ Պաղեստին աշխարհի մէջ մէկը Խաչ բարձրացաւ երկու աւազակներու հետ, որովհետեւ Ան կ'երագէր թէ բոլոր մարդիկ Աստուծոյ զաւակներն էին, և թէ երբ մէկը վիրաւորէր կամ վնաս հասցնէր ուրիշի մը, ան զԱստուծոյ վիրաւորած կ'ըլլար: Սակայն անպայման օր մը աշխարհ տարբեր աչքով պիտի նայի երկնայինին, Աստուածութեան, և զՔրիստոս պիտի ճանչնայ իբր Տէր և Աստուած: Ու այն ատեն միայն երկրի պետութիւններ պիտի հասկնան թէ զինուորական բանակներ, մարտանաւեր և կամ օդանաւեր երբեք պիտի չյաջողին ցանկացուած խաղաղութիւնը պարզել տառապակոծ մարդկութեան և աշխարհի, և թէ քաղաքական, նիւթական և վաճառականական ոյժերը կը նմանին ժամանակաւոր ստացուածքներու, կամ գիշերուան շոգիին, որ կը ցնդի առաւօտեան արեւու ճշմարտութեան հետ:

Ու մինչ այս նուիրական սրբավայրէն կ'աւանդեմ խաղաղութեան ողջոյնը, բեկեալ հոգիով ու տազնապեալ սիրտով կը յիշենք Սուրիոյ մեր քրիստոնէայ և նամանաւանդ Հայ եղբայրներն ու քոյրերը, որոնք կը տուայտեն անորոշութեան, գաղթականութեան և ահ ու սարսափի ճիրաններուն մէջ: Ու այս ահաւոր դրութեան մէջ չեն խնայուիր հիւանդներ, կիներ, մանուկներ և Աստուծոյ պաշտամունքին յատկացուած աղօթատեղիներն անգամ: Այո՛, դժբախտաբար վտանգուած քաղաքակրթութեան և արհամարհուած մարդկութեան այս տազնապալը ընդգրկած է նաեւ մեր ժողովուրդը:

«Չի ոչ գոյր նոցա տեղի յիշեանին», ո՛չ միայն այդ օրերուն, այլ այս օրերուն առաւել եւս ահաւոր չափերով մեծցած է թիւը այն մարդոց՝ որոնք իրենց սիրտերուն, կեանքին և ապրումներուն մէջ տեղ չունին այս համեստ մտորին մէջ մարդացած Աստուածորդոյն:

Ծնունդը այս գիշեր, սիրելի Հայորդիներ, տօնն է հանդիպման Աստուծոյ և Մարդուն, Անառակ Որդոյն - Մարդկութեան՝ իր Հօր տուն դարձին: Մանուկը, որ կը ծնի այս գիշեր մեր հոգիներուն մէջ մարմնացումն է գերագոյն սիրոյ, որ կը ծնէր մարդ-արարածը ետ տանելու իր Արարչին:

Աստուծոյ Խօսքը՝ Քրիստոս անգամ մը միայն ծնաւ պատմութեան ու ժամանակի մէջ, սակայն վստահ եղէք սիրելիներ, որ Ան պիտի ուզէր ամէն օր մարմնանալ ու ծնիլ մեր հոգիներուն մէջ, որոնք իր տաճարներն են: Տիրոջ Խօսքին մարմնացման «Մեծ և սքանչելի խորհուրդը» յիշատակի դէպք մը, տօն մը ըլլալէ աւելի, մէն մի քրիստոնէայի համար պարտի ըլլալ ներքին ու ամենօրեայ փորձառութեան տօնը: Սիրոյ Իշխանին ծնունդը բոլոր ժամանակներու յուզիչ քերթուածն է կեանքի ու կրօնքին. եւ բանաստեղծութիւնը՝ երկնքին ու երկրին: Երանի՛ բոլոր անոնց՝ որոնք կ'ըմբռնեն այդ բանաստեղծութիւնը և մանաւանդ կ'ապրին զայն:

Ի բոլոր սրտէ կ'աղօթենք նորածին Մանկան և Աստուածամօր, որ իրենց անհուն սիրով անգամ մը եւս հալեցնեն խաւարի իշխաններուն սիրտերը, որպէսզի դադրին պատերազմներն ու արիւնահեղութիւնները, և Աստուծային սէրն ու խաղաղութիւնը տիրապետեն աշխարհի:

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԻ

Ն. Ա. Մ.

19 Յունուար 2016

Մանրանկար.- «Մոգերու Այցելութիւնը», Հռոմկլայի Աւետարան, ծաղկող Թորոս Ռոպին, 1260թ., Երուսաղէմի Ձեռագրատուն:
Լուսն.՝ Կարօ

